**Երևան քաղաքի Ավան վարչական շրջանում ուսումնասպորտային համալիրի կառուցման ներդրումային ծրագիր**

***Ծրագրի նկարագիրը***

Ծրագրի նպատակն է Երևանի բնակչության համար ստեղծել մարզական և ուսումնական միջավայր:
Համալիրը կառուցվում է Ավան վարչական շրջանի Ծարավ Աղբյուրի փողոցում: Փողոցի և համալիրի միջև նախատեսվում է զբոսայգու կառուցում, որը համալիրի բարեկարգ այգու հետ կստեղծի հանգստի ընդհանրական միջավայր:
Համալիրի կառույցները նախագծվել են՝ հաշվի առնելով ռելիեֆի թեքության առանձնահատկությունները: Համալիրը կառուցվելու է ժամանակակից տեխնոլոգիաներով: Ուսումնամարզական համալիրն օրական կընդունի շուրջ 2000 մարդ:
Համալիրը ներառում է 3 հիմնական գոտի՝

I. Ուսումնական գոտի
   - 950-տեղանոց դպրոց, այդ թվում՝
     *1) ավագ դպրոց 450 աշակերտի համար,*
     *2) միջնակարգ դպրոց 500 աշակերտի համար,*
     *3) փակ լողավազան,*
     *4) մինի-ֆուտբոլի մարզադաշտ,*
   - 250-տեղանոց մանկապարտեզ:

II. Մարզաառողջարարական գոտի
   - մարզաառողջարարական համալիր՝ ունիվերսալ խաղասրահով,
   - շուրջտարի գործող 350-տեղանոց արհեստական սառույցով փակ սահադաշտ՝ ուսումնամարզական գործընթացի, տափողակով հոկեյի, գեղասահքի և ազատ ոճի սահքի մարզումների անցկացման համար,
   - ստորգետնյա ավտոկանգառ՝ նախատեսված 85 ավտոմեքենայի համար:

Շենքը երկհարկանի է, առաջին հարկում գտնվում են սահադաշտը և այցելուների ու մարզիկների ընդունման համար նախատեսված տարածքները, հանդերձասրահը, սանհանգույցները և այլ ինժեներական

ու տեխնիկական կառույցներ, երկրորդ հարկում՝ նախասրահը, հանդերձասրահը, ընդհանուր ֆիզիկական պատրաստվածության դահլիճը, պարասրահը, սրճարանը, այլ տեխնիկական և օժանդակ կառույցներ:



III. Հանգստի գոտի, որը ներառում է զբոսավայր՝ սպորտային կառույցների դիմաց, և այլ շենքերին կից բարեկարգված և կանաչապատված հատվածներ՝ փոքր ճարտարապետական ձևավորումներով, արտաքին ինժեներական ցանցով և լուսավորությամբ:

| | |
|---|---|
| ***Տեխնիկական ցուցանիշներ*** | Նախագծային տարածքի մակերեսը կազմում է 3,1841 հա: Ընդհանուր շինարարական աշխատանքների ծավալը կազմում է 29452 քմ: |
| ***Ծրագրի ժամկետներ*** | Ծրագրի իրականացման համար նախատեսված է շուրջ 3 տարի: |
| ***Ծրագրի արժեքը*** | Ընդհանուր ներդրումների արժեքը շինարարության մասով կազմում է շուրջ 35 մլն ԱՄՆ դոլար: |
| ***Ներդրումների ձևը և հիմնական պայմանները*** | Ծրագիրն իրականացվում է մասնավոր ներդրումների ներգրավմամբ՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կողմից: |
| ***Ներկա իրավիճակ*** | Շինարարական աշխատանքները սկսվել են 2016թ. փետրվարին: |